

Ը.

ՎԱՍՆ ԽԱԶԻՆ ԶԱՐԶԱՐԱՆԱՅ

1. Զխաչն յիմարութիւնն համարին հեթանոսք, գայթաղու-
թիւնն՝ Հրեայք, կերպարանաւք իբրեւ առ աշաւք ինչ եւ ոչ ճշմար-
տութեամբ՝ հերձուածողք. (զխաչն), որ եկեղեցւոյ փրկութիւնն
է եւ կեանք: Եւ որով պարտն էր առաւել լուսաւորել, այնու խաւա-
րին կորուսեալք: Քանզի զոր ինչ յառաջագոյն ոք լսէ, այնմ ընտա-
նեցեալ՝ չկարեն վաղվաղակի դալ ի ճշմարիտ գիտութիւնն:

2. Այլ զոր աւերինակ յորժամ գրեւ ոք ինչ կամեցաւ ի պնա-
կիտս, մոմն հարթէ առ ի զառաջին* գիրն խաղաղել եւ ապա զոր
կամին գրել՝ կարէ գրել: Սոյնպէս պարտի մարդ, զի մի իմիք
գտանիցի ընտանացեալ կանխեալ, զի մի յոռեաւն զբարին խո-
տիցէ: Քանզի եւ երկիր արաւսացեալ փշալից, եթէ ընդունիցի
սերմ ինչ ի վերայ ցանեալ՝ հեղձուցանէ: Բայց եթէ նախ փուշն եւ
խառնախոտ բանջարոցն արմատք ի բաց խլիցին, ապա գտանի ան-
գնաս սերմանել սերմն:

3. Եւ քանզի ճաղեն եւ նախատեն զխաչն եւ զմահն կենարա-
քին, ասացուք զիստեայն, թէ «ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր
է տէր». զոր այսր անդր բանբասեն միշտ զխաչէն, որ նոցա ճա-
ղանք են եւ մեզ պարծանք: Զվայելէր, ասեն, Աստուծոյ ընդ բռնու-
թեամբ մտանել մահու չափ: Ասացուք. Ակամայ Աստուծոյ ընդ
բռնութեամբ մտանել չվայելէ՝. կամաւ կրել զչարհարանս իւրով
մարմնով վայելէր եւ առաւել վայելէր:

4. Զի եթէ ահամայ, ապա պարտեալ յաղթեցաւ. եւ եթէ կա-
մաւ, ապա յաղթեաց իբրեւ զամենաղաւ: Քանզի ոչ եթէ մարդ
ոք ի մարդկանէ վասն մարդկան մեռաւ, այլ Աստուծոյն եւ Որդի
Աստուծոյ Քրիստոս կրեաց իւրով մարմնով վասն իւրոց արարա-
ծոց զչարհարանսն եւ զմահ, անգնաս եւ անմահ մնացեալ զաւրու-
թեանն:

5. Եւ այսպէս ի ծննդենէն եւ ի կուսէն Աստուծոյ մարդացեալ
հաւատաց եկեղեցի զՔրիստոս. եւ ի* խաչին Աստուծոյ մարմնով:
Եւ առաջին ծնունդն ի Հաւրէ՝ անցանէր ըստ ամենայն միտս մարդ-
կան եւ հրեշտակաց, հրեշտակապետաց եւ զաւրաց: Ըստ այնմ զոր
եւ մարդարէն ասէ, եթէ «զազգատոհմն նորա ո՞ր պատմեցէ». եւ
«ոմն» ասելով զամենայն արարածս փակեաց ընդ անգիտութեամբ:
Ի սորին հաստատութիւն ասէ Տէրն յաւետարանի, եթէ «Ոչ ոք

1 Խմտ. Ա. Կորն. Ա. 23:

4 Բ լուսաւորեալ... այնու:

5 Բ քանզի զի զոր:

8 Բ խաղաղէ:

11 Խմտ. Ոսկ. Մատթ. Բ. 24. «Իբրեւ
զանդ արօսացեալ մանկութիւն ընդ վայրա-
սուն, յամենայն կողմանց փշալից տատա-

կարէր»:

16 Մաղթ. ԼԳ. 9:

19 Բ ահամա:

22 Բ ահամա:

27 Բ ծննդենէն:

32 Ես. ԾԳ. 8:

35 զիտէ զՀայր եթէ ոչ Որդի. եւ ոչ զՈրդի, եթէ ոչ Հայր». եւ զՀոգ-
ւոյն ասէ եթէ «Յորժամ եկեացէ միսիթարիչն, նա պատմեցէ ձեզ
զամենայն». եւ Առաքեալ ասէ. «Ոչ ոք զիտէ զԱստուծոյ՝ բայց
Հոգին որ յԱստուծոյ է»:

6. Եւ մեք տաց* ուք փառս ամենագէտ Երրորդութեանն այժմ
40 եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

35 Մատթ. ԺԱ. 28:

36 Յովհ. ԺԵ. 26:

36 Բ հոգւոյն:

37 Ա. Կորն. Բ. 12. «ոչ զաստուծոյն ոք
զիտէ եթէ ոչ հոգին աստուծոյ»:

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԶՐՈՅՑ ՊԵՆՁԷ ՔԱՂԱՔԻ

Գրիգորիս Աղթամարցի կը գրէ թէ ինքն
եղած է Պղնձէ քաղաքի պատմութեան լուսա-
ծողը, այսինքն Պղնձէ քաղաքի Զրոյցը, զոր
թարգմանած էին նախնիք արաբերէնէ,
ինքն առած վերամշակած եւ նոր կաֆանե-
րով ճոխացուցած ի լոյս ընծայեալ է: Այս
նոր հրատարակութեան առաջին օրինա-
կողը, Մարգարէ վարդապետ կը վկայէ, թէ
այն օրինակը, զոր ունէր Աղթամարցին,
հնացած եւ մաշած էր, Ողբերն եւ Կաֆա-
ները, որոնք կային հոն, պակասաւոր էին,
ինկած էին բառեր եւ տողեր, զորոնք լրա-
ցուց Աղթամարցին. ասկէ կրնանք հետեւ-
ել թէ նաեւ բնագիրը, որ թարգմանուած
էր ռամկօրէն, եւ այն գաւառական բարբա-
ռով, կարօտ էր սրբագրութեան եւ բարե-
փոխութեան:

Զրոյցին այս վերամշակուած բնագիրը
հրատարակ ելաւ 1526ին «Պատմութիւն
Պղնձէ քաղաքի» վերնագրի եւ «Խրատ հոգէ-
շահ յօգուտ իմաստնոց» ենթագրի տակ. եւ
գտաւ ընդունելութիւն հայ ժողովուրդի
քով. աճեցան ձեռագիր օրինակները ԺԶ-
ԺԸ դարերուն. եւ տպագիր օրինակները
աւելի քան 10 տպագրութեամբ ԺԸ-ի դա-
րերուն:

Այսպէս ողորկեց Պատմութիւնը գրական
չուկան. իսկ Պղնձէ քաղաքի Զրոյցը անհե-
տացաւ հրատարակէն հետակորոյն:

Հայ գրականութեան համար յարգելի
են թէ Զրոյցն եւ թէ Պատմութիւնը. մինչ
Պատմութիւնը ԺԶ. դարու ռամկօրէն հայե-
րէնը կ'ընծայէ մեզի, Զրոյցը կը խոստա-
նար մեզ հնագոյն ռամկօրէնը ըմբռնել:

Իրաց այս վիճակի մէջ «գեղեցիկ գիւտ»
պէտք էր համարել, եթէ յաջողէինք երեւան
հանել Զրոյցս փոշեղգած կամ ծածկաթա-
ղոյց գրադարաններու խորշերու մէջէն:

Զեռագիրը: Երբ կը ցանկէի Հոռոմի
Հայոց Հիւրանոցի հայերէն ձեռագիրներն ի
Ս. Վլաս, Թ. 33/24 ձեռագրին մէջ ընդ ա-
ռաջ ելաւ Պղնձէ քաղաքին զրոյցը իր գող-
որիկ գաւառաբարբառով:

Զեռագիրս, գրուած անարուեստ բոլոր-
գրով, չունի յիշատակարան, վասն զի վեր-
ջէն թուղթեր ինկած են. այս պատճառով
ալ անյայտ են գրչին անունը, գրութեան
տեղն եւ տարին: Իմ ցուցակիս մէջ ժամա-
նակը նշանակած եմ ԺԴ. դար: Այն պարա-
զան որ Ֆրիկի «Յորժամ մահն մաւտենայ...»
տաղն վերնագիր կը կրէ. «Ուտանաւոր ասա-
ցեալ է Ֆրիկն, որդի Թագվորչին, եղբայր-
որդի Դոտոնոյի ի վերայ իւր մեղացն, ի
վարս բանայսիբաց» (Թղ. 65բ), կրնանք են-
թադրել թէ կա'մ գրիչս եւ կամ անոր դա-
ղափար-օրինակի գրիչը ժամանակով մեր-
ձաւոր եղած է Ֆրիկին (ԺԴ. դարու առաջին
տասնեակի):

Գրիչը անվարժ եղած է ռամկօրէն
գրութեան օրինակութեան, այս պատճա-

ռաւ ալ սխալաշատ են այն հատուածները, որոնք ռամկօրէն են. մինչ զբարբար հատուածներու մէջ աւելի յաջողակ է:

Բովանդակութիւնն է.

1. Զրոյց Պղնձէ քաղաքի (Թղ. 3ա—15բ):

2. Սօսք Անդամալուծին ընդ Քրիստոսի (15բ—22ա):

3. Պատմութիւն Մարխայ վաճառականին (28բ—33ա):

4. Գիր հանհանելուկի (Հարցմունք աղջկան ընդ մանկան. 33ա—40բ):

5. Վարք Յովհաննու կամաւոր աղքատի (40բ—48ա):

6. Պատմութիւն Ալեքսիանոսի կամաւոր աղքատի (48ա—65ա):

7. Իմաստութիւն մեծ թագաւորին Զարմազանայ եւ որդւոյ նորին Ֆարմանի Ասմանին վարուցն (48բ—65ա):

8. Ոտանաւոր Ֆրիկի (65բ—73բ):

9. Վիճակախաղք (Թղ. 74ա—80բ):

Առաջին հատուածը վերնագիր կը կրէ. «Զրուց եւ խաւք առաջի թագաւորացն եւ իշխանացն, զոր թարգմանեցին Դաւիթ կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լիզվէ»:

Այս վերնագիրը կը համարիմ ընդհանուր խորագիր զրոյցներու շարքի մը, որոնք կը պարունակեն «առաջի թագաւորացն եւ իշխանացն զրոյցն եւ խօսքն» սահմանուած պատմելու եւ կարդալու թագաւորաց եւ իշխանաց առջեւ: Այս զրոյցները «թարգմանեցին» այլ եւ այլ թարգմանիչներ «ի հայ լեզու ի տաճիկ լեզուէ» ի խնդրոյ կամ ի հաճոյս «Դաւթի Կուրապաղատի»:

Թարգմանիչներու անունը, թարգմանութեան տեղն եւ տարին չեն յիշուած: Նկատմամբ տարւոյն կրնանք վստահաբար ըսել թէ 1000, մարտ 31էն յառաջ պէտք է թարգմանուած ըլլան, հաւանօրէն ընդ մէջ 950—1000 շրջանի, վասն զի Դաւիթ Կուրապաղատ վախճանած է 1000, մարտ 31, դատիկ օրը, խոր ծերութեան մէջ: Անոր գործունէութեան տարիները ծանօթ են 985էն ի վեր: Թարգմանիչները, որոնք թարգմանեցին այդ զրոյցները արաբերէնէ աշխարհաբար հայերէնով, ընտրեցին անշուշտ այնպիսի գաւառական բարբառ մը, որ ընտանի էր Կուրապաղատին, այսինքն Տայոց

նահանգի բարբառով, ուստի իրենք ալ Տայեցի ըլլալու են:

Դաւիթ Կուրապաղատ պատմութեան մէջ առաջին անգամ երեւան կու գայ 985ին: Անոր նկարագիրը տուած է պատմագէտ Ժամանակակից մը, Ստեփանոս Ասողիկ. «Էր այրն հեղ եւ հանդարտ. առաւել քան դամենայն թագաւորս որ ի Ժամանակս յայս: Եւ եղեւ նա պատճառ խաղաղութեան եւ շինութեան Արեւելեայց, մանաւանդ Հայոց եւ Վրաց. զի զոռ պատերազմաց դադարեցոյց նա, յաղթող եղեալ ամենայն շուրջանակի աղգաց, եւ ամենայն թագաւորք կամաւ հնազանդեցան նմա: Սա լցեալ աւուրբք, ծերացեալ Ժամանակօք՝ վախճանցաւ յաւուր մեծի փրկական դատիկն, ի Նիթ. Թուականին» (էջ 275):

Այս «Զրոյցք եւ խօսք առաջի թագաւորացն եւ իշխանացն» չեն կրնար յարաբերել Ժողովածոյքիս 2, 3, 5, 6, 8, 9-րոնք իրենց նկարագրով քրիստոնէական արուածքներ են, 5—6 թարգմանուած են յուսմարէնէ եւ 2, 3, 9 հաւանօրէն հայ գրչէ, ինչպէս հաւաստեալ Ֆրիկի տաղերը: Բայց 1, 4, 7 ուղղակի կամ միջնորդաբար արաբերէնէ թարգմանուած զրոյցներ են, հիւսուած վասն «առաջի թագաւորացն եւ իշխանացն»: Այս Զրոյցներու շարքէն են նաեւ Արդւ-ճաֆարի, Փեր Փահլուլի պատմութիւնները, որոնք պահուած են Տաղարաններու մէջ: Զրոյցներ, որոնք մեծաւ մասամբ Հնդկական են, եւ Պարսիկներու միջնորդութեամբ գրաւոր կամ բերանացի անցած Արաբներու. անոնցմէ ոմանք մուտք գտած են ապա Հաղար ու մէկ գիշերներու հաւաքածոյքին մէջ:

1. ԶՐՈՅՑ ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔԻ

Զրոյցս, որ Հայոց Հիւրանոցի Թ. 33ի մէջ մասնաւոր վերնագիր չէր կրեր, Գրիգորիս Աղթամարցի կոչած է «Պատմութիւն Պղնձէ քաղաքի». հաւանական է, որ այս վերնագիրը գտած էր Աղթամարցին իր ունեցած հին օրինակի մէջ. վասն զի այսպէս «Պատմութիւն» կոչուած են նաեւ Արդւ-ճաֆարի եւ Փահլուլի զրոյցները: Ես պատշաճ կը համարիմ այս տեղ «Զրոյց» կոչել, զանազանեւ համար հին բնագիրը Աղթամարցւոյ վերամշակած նոր բնագրէն:

Թ. 33ի բնագիրը համեմատելով Աղթա-

մարցւոյ բնագրին հետ կը տեսնուի թէ Աղթամարցւոյ ունեցած հին բնագիրը աւելի լիակատար էր քան այն բնագիրը, զոր կը ներկայացնէ Թ. 33: Վերջնոյս անանուն գրիչը համառօտած է Զրոյցին մուտքը:

Երկու բնագիրներու համեմատութիւնն է.

Պատմութիւն Պղնձէ քաղաքի գոր քարթմանեալ է ի յարապ լեզուէ ի հայ լեզու:...

Կայր ի Բաղդադ քաղաք խալիֆայ մի, որում էր Արդւ Մելիք (անուն): Օր մի իջաւ ի մէջան. Ժողովեաց զիւր մեծամեծքն, էհարց վասն Սողոմոն արքային, թէ ո՞ր պէս առնէր հրաման ի վերայ դիւանն:

Յառաջ եկաւ ամիրա մի եւ ասաց. Հզօր եւ մեծ խալիֆայ, տեսի այր մի որդի մեծ վաճառականի. ասաց թէ ես գնացի ի Սելեւկեայ կղզին. ի ծովին մոլորեցաք քառասուն օր. յետոյ եկաք ի լեռն մի բարձր, որ ասմենեւին ոչ ճանաչեաք զտեղին. տեսաք մարդիկ մեւ, այլադէմ, բարեւ աւելին եւ տարան ի տունս իւրեանց, կացաք անդ երեք օր, ի ծովն յորս գնացին. եւ տարան զմեզ ի հետ. արկին զգործիսն ի շուրն եւ բազում ձուկն բռնեցին. եւ ի հետ ձկանցն բերին կուժ մի արճճով մատնէ հարած Սողոմոնի մատնէ հարով. բացին զկուժն, ելաւ սեւ մուխ, բարձրացաւ ի յօդս, եղեւ կերպարան զիշատեսիլ մարդոյ. աղաղակեաց եւ ասէ. Սողոմոն, Սողոմոն, որդի Դաւթի մարգարէին, մեղայ, այլ չգործեմ զինչ գործեցի, կամ ի հրամանս քո: Յայն ժամ ասացին այն մարդիկն թէ գիտաց դեւն թէ Սողոմոն դեռ կենդանի է:

Յայնժամ ասէ խալիֆայն. Ոչ հանգչի սիրտ մի միջեւ տեսնեմ յայն կեդրուն, եւ ապա հաւատամ այտ բանիդ: Եւ հրամայեաց խալիֆայն Սալեհայ, թէ գնայ առ Ամիր Մուսէն յԱրեւմտեց տէրն, որ երթաք երկուստ ի շուր գաք մինչեւ գտանէք ի յայն կեդրուն եւ ինձ հաստատուն զրուց տաք, թէ ինչ կայ ի ծովու կամ ի ցամաքի:

Եւ ետ խալիֆայն շատ գանձ Դաւիթին, եւ պատուական աղուք, արալի ձիանք եւ աղէկ ձիանք զինքն: Գնաց Դաւիթն առ ամիր Մուսէն:...

Եւ ետ խալիֆայն շատ գանձ Դաւիթին, եւ պատուական աղուք, արալի ձիանք եւ աղէկ ձիանք զինքն: Գնաց Դաւիթն առ ամիր Մուսէն:...

Եւ ետ խալիֆայն շատ գանձ Դաւիթին, եւ պատուական աղուք, արալի ձիանք եւ աղէկ ձիանք զինքն: Գնաց Դաւիթն առ ամիր Մուսէն:...

Եւ ետ խալիֆայն շատ գանձ Դաւիթին, եւ պատուական աղուք, արալի ձիանք եւ աղէկ ձիանք զինքն: Գնաց Դաւիթն առ ամիր Մուսէն:...

Եւ ետ խալիֆայն շատ գանձ Դաւիթին, եւ պատուական աղուք, արալի ձիանք եւ աղէկ ձիանք զինքն: Գնաց Դաւիթն առ ամիր Մուսէն:...

Եւ ետ խալիֆայն շատ գանձ Դաւիթին, եւ պատուական աղուք, արալի ձիանք եւ աղէկ ձիանք զինքն: Գնաց Դաւիթն առ ամիր Մուսէն:...

Եւ ետ խալիֆայն շատ գանձ Դաւիթին, եւ պատուական աղուք, արալի ձիանք եւ աղէկ ձիանք զինքն: Գնաց Դաւիթն առ ամիր Մուսէն:...

Եւ ետ խալիֆայն շատ գանձ Դաւիթին, եւ պատուական աղուք, արալի ձիանք եւ աղէկ ձիանք զինքն: Գնաց Դաւիթն առ ամիր Մուսէն:...

Եւ ետ խալիֆայն շատ գանձ Դաւիթին, եւ պատուական աղուք, արալի ձիանք եւ աղէկ ձիանք զինքն: Գնաց Դաւիթն առ ամիր Մուսէն:...

տրն ընդ Ամիր Մուսին,
թէ զայդ զիտուն ծերդ,
որ ի յաշտարհի ոչ կայ,
ի քո հրամանքս եմ
տուել:

Զրոյցիս արարերէն սկզբնադիրը գտաւ
Henri Laurentie¹ Հաղար ու մէկ գիշերներու
մէջ²:

Չեմ ուզեր այս տեղ անդրադոյն քննու-
թեանց եւ համեմատութեանց մէջ մտնել:
Ստորեւ պիտի տամ Զրոյցս ամբողջու-
թեամբ:

2. Գիր հանգանակի: Այլ ձեռագիր-
ներ պէտքէս վերնագիրներ կը կրեն. «Պատ-
մութիւն աղքատ թագաւորի»: «Պատմու-
թիւն գեղեցիկ վասն առ(ա)կի իմաստու-
թեան», «Պատմ. եւ առակաբան». «Պատմ.
վասն Մանկանն եւ Աղջկան. եւ հարցաքննու-
թիւն ընդ միմեանս եւ միարեւոյթիւն
նոցա», եւ այլն:

Կը սկսի. «Այր մի էր մեծատուն իշխան
ի քաղաքի մի...» կամ «Կայր թագաւոր մի
չարկամ զօրացաւ ի վերայ աշխարհին...»:

Հոռմի Հայոց Հիւրանոցի թ. 33 ունի
վերնագիրն եւ սկիզբն. «Գիր հանհանե-
լուկի: Թագաւոր մի կար եւ ունէր զուստը
մի գեղեցիկ յոյժ եւ ասէր հանհանելուկ ընդ
կտրճերն. եւ որ չի տար պատասխանի, հա-
տանէին զլուսն հրամանաւ թագաւորին...
եւ լուսնը զբան զայս որդի մի թագաւորի
(ջնջուած եւ գրուած իշխանի) ի հեռա-
տանէ եւ էր իմաստասէր յոյժ եւ ցանկայր
տեսանել զաղջիկն զայն...»:

Գուրս ձգուած է զրոյցիս առաջին մասը,
ուր կը պատմուէր կտրիճ իշխանի թագաւո-
րական ծագումն եւ անկումը եւ իր արկա-
ծախնդիր ձեռնարկները:

Չեռագիրք. Հոռմ, Հիւրանոց Հայոց,
թ. 33, թղ. 33ա: Վիեննա, 671, 143ա:
976, 209ա (1614): 977, 55ա: Վիեն-
տիկ 246, 151ա (Յուլյակ 675): 256,
104բ (Յուլյակ 766): 283, 554բ (Յուլյակ
996): Էջմիածին 33, 170բ: Երեւան, Թան-

¹ La version arménienne du conte de la
Ville d'Aïrain: Revue des Etudes arméniennes 1
(1921) 297—302.

² Gaudefroy-Demombynes, Les cent et une
nuits, traduites de l'arabe, Paris 1911, էջ 284
եւ շար.: Տես եւ ծանոթութիւնք, էջ 329 շար.:
Հմմտ. նաեւ Հաղար ու մէկ գիշերներ, արադական
վէպեր. թարգմանեց Մ. Մ. Հատուր Ա. Զմիւռնիա
1870, էջ 180—183:

դարան, 395, 210բ (1650): 824, 25ա
(1687): 855: 1010, 123ա (ԺԸ): Երուսա-
ղէմ, 726 (1678): Զմառ, 404, 8ա (1642):
Անտոնեանց, 77, 236ա: 92, 53բ: 110, 1ա:
125, 198բ: Հալէպ. Բ. 28, 380ա (Յուլ. 87):

Հրտ. Գիրք պատմութեան որ կոչի
Պղնձէ քաղաք. Կ. Պոլիս 1749, էջ 135—163:

Այս զրոյցի հիման վրայ յորինած է
F. Schiller իր Turandot, Prinzessin von
China. Ein tragikomisches Märchen nach
Gozzi³. Schillers sämtliche Werke, Stutt-
gart 1840, S. 582—608:

3. Իմաստութիւն մեծ քաղաքի
Զարմագանայ եւ որդւոյ նորին Ֆարմանի
Ասմանի վարուցն, ծննդեան եւ մահուան:

Եղեւ մեծ թագաւոր մի յԱսորեստան,
Անուն թագաւորին էր Զարմանագան.
Այնէր շատ քաղաքացի հուք եւ հրաման,
Ունէր անթիւ հեծել եւ քաջ պահաւան...

Չեռագիրք. Հոռմ, Հիւրանոց Հայոց,
թ. 33/24, թղ. 48բ—65ա: Վիեննա, 671,
96ա (1668): 976, 36ա (1614): Պարիս, 307,
43բ: Վենետիկ, 246, 161, 176բ. (ԺԷ. ցուց.
Բ. 676): 234 (1564): 325 (1590): 1330
(1563). Հալէպ, 139, 143ա (Յուլ. 242):
Երեւան, Պետ. Մատ. 3595, 5ա (ԺԵ): 5306,
33ա (ԺԷ): 6451, 146ա (1708): 7050, 1ա
(1646): 7709, 35ա: 7726, 1ա (ԺԷ): 8219,
99ա (ԺԹ): 8463, 165ա (1707): 8605, 1ա
(1667):

Հրտ. Գրքուկս այս որ ասի Հանելուկ,
զոր արարեալ է տեսն Ներսէսի Կրայեցւոյ.
Կ. Պոլիս 1724, էջ 33—109: Անահիտ,
1904—1905 Հայ. բնագիրն եւ զաղդ.
թարգմ.: Գաղղ. թարգմ. նաեւ ի թերթին
Revue des Traditions populaires, 1906, p.
407—500: Երեւան, 1957:

Զրոյցս հաւանօրէն արձակ թարգմանու-
թիւն մըն էր «Ի տաճիկ լեզուէ», որ ապա
հայ քերթողէ մը, թերեւս Ֆրիկէ վերա-
ծուած է ոտանաւորի:

Ինձ կը թուի, թէ թագուհւոյն ողբը իր
անգաւազութեան համար, ներշնչուած է
Ալեքսիանոս կամաւոր աղքատի մօր ողբէն.

Ասէ ինք իւր մօրն շատ բաներ ողբով,
Թէ զինչ ծառ կայ տնկած զարգարին պտղով:

³ Gasparo Gozzi, Opere, Padova, 1818—1820
հրատարակուած 16 հատորով:

Եւ զինչ բոյս կայ դալար երեւին ծաղկով,
Եւ մէն ծառ չորացած՝ թագաւոր թախտով:
Հայր եւ յանասունը ծնունդ յաճումն է,
Զթռչունս երկնից զիտեմ անթիւ երամ է.
Տեսնում եւ զգաղանս եւ յաւելումն է.
Դառնում եւ յիս հայրմ կեանքս հարամ է:

«Եւ էր կին նորա ամուլ եւ անգաւակ...
լայր եւ ողբայր եւ հառաչէր ընդդէմ Աստու-
ծոյ... խնդրեմ զորդի յԱստուծոյ. այլ տե-
սանեմ զի տուեալ է Աստուած անասնոց
ծնունդ, այլ ծառոց եւ տնկոց պտղաբերու-
թիւն. եւ զիս միայն է զրկել... (անդ, թիւ
33, թղ. 41ա: Վարք Հարանց, Ա. 139):

4. Յառաջին քաղաքացն է Արդլ ձա-
փարին եւ ձեմիլային պատմութիւն:

Եւ եղեւ ի ժամանակի ի Պաղտատ քա-
ղաքի ծեծեւան յաղթող թագաւոր մի. եւ
որդի ոչ ունէր: Բազում անգամ աղաչեաց
զԱստուած ուխտիւք եւ բազում ինչս բաշխէր
աղքատաց եւ կարօտելոց, միթէ ողորմի նմա
եւ զաւակ տացէ նմա...:

Վջ. Հայրն մի տարի եւ կէս ապրեցաւ
եւ մեռաւ. եւ նստաւ յաթոռ թագաւորու-
թեան Արդլ-ձափարն, խելօք եւ իմաստու-
թեամբ վարէր զթագաւորութիւն ուրախ եւ
մուրաւորով մինչեւ ի մահուն օրն»:

Նախորդին նմանակ, խառն կափանե-
րով զրոյց մը:

Չեռագիր. Վիեննա, թ. 671, 128ա—
135բ:

5. Պատմութիւն Փիր Փախլուլին: Յա-
նուն Աստուծոյ ողորմածին. եւ յիշումն ա-
ռաջին ժամանակաց. զոր են ի զբաւանս
մարդկան. որ է փոխած ի տաճիկ լեզուէ ի
հայ տփթար այսպէս. զոր արարաք սկիզբն
Փահլուլ թագաւորին պատմութեանս:

Որ (սա) էր այր իմաստուն եւ առա-
քին. կին եւ որդի ոչ ունէր. եւ ասէին
զնմանէ թագաւոր արեւելեան աշխարհին...:

Վջ. Ով աստ բարի զօրծեր է, նա յան-
դէն զայն դառնէր. եւ ապա դարձոյց զխալի-
ֆայն եւ հաւատաց յամենասուրբ Երրորդու-
թիւնն...:

Չեռագիր. Տիւրինդէն. 70, 392ա—95բ
(1432. Յուլ. 109):

Նոյնը այլ իմբարդութեամբ. «Վարք եւ
պատմութիւն Փախլուլ քաղաւորին, որ ան-

արգեաց զփառս աշխարհի: — Սա էր մեծ
թագաւոր եւ տէր Արեւելեան աշխարհին. էր
իմաստուն եւ առաքինի. սիրէր զաղքատու-
թիւն եւ ասէր զմեծութիւն. ասէր զայս
կեանքս եւ հոգայր զմահուն օրն...:

Վջ. Եւ ապա ամաչեց խալիֆան. եթող
զհամբէն եւ ելաւ նստաւ յաթոռն եւ ասէ.
Փառք Աստուծոյ որ այսպէս զիտութեամբ
պատուէ զսիրելի իւր եւ տայ իմաստութիւն
ուժ եւ կամի... աւրհնեալ է Աստուած.
ամէն:

Չեռագիրք. Վիեննա, թ. 671, 135բ—
143ա: Էջմիածին, 512, 280ա (ԺԷ): 1495,
4ա (1684): Երեւան, Թանգ. 649, 126բ
(1652):

Հրտ. Գիրք պատմութեան որ կոչի
Պղնձէ քաղաք. Կ. Պոլիս 1749, էջ 61—76:

ԶՐՈՅՑԻ ԵՒ ԽԵՒՍՔ ԸՌԱՋԻ ԹԵԳՆՈՐԸՆ ԵՒ ԻԾԽԵՆՆԵՆ, ԶՈՐ ԹԱՐԳՄԱՆԵՆԻՆ ԳԵՐԻԹ ԿՈՐԻՇՊՈՆԵՆԻՆ Ի ՀԸՍ ԼԵՋՈՒ Ի ՏԸՄԻԿ ԼԵՋՈՒԷ ՅԱՆՈՒՆ ԵՍՏՈՒԹՈՅ ՈՂՈՐՄԱԹԻՆ

1. Կայր խալիֆա մի ի Պաղտատ քաղաք,
եւ ասէին անուն նորա Աստուլ Աղիդ: Աւր մի
եղաւ ըստ սովորութեան իւրոյ եւ խաղար ի
մոյտանն: Եւ երեկ մարդ մի, եւ ասեն զա-
նուն նորա Դալիֆ. երեկ եւ ծուր էած խա-
լիֆային եւ ասէ. է՛ հղաւ խալիֆա, քաղաք
մի կայ ի հիւստեայ դէհն, անուն նորա Պղնձէ
քաղաք. մաւտ ի ան քաղաքն են ան դեւքն,
որ Սողոմոն ի կթերն էած եւ արճիճով զրե-
րան կալաւ եւ մատնէ հրեց:

2. Կոչեց խալիֆան զԱմիր Մուսին եւ
ասէ. Եկ զնա՛, զի՛տ զան դեւքն, որ Սողո-
մոն զնգանել է:

Ասէ Ամիր Մուսին. Ոչ զիտեմ զճանա-
պարհն եւ ոչ կարգացել եմ զբով:

Ասէ խալիֆան. Հալեւոր մն կայ ի քա-
ղաքս. նա զիտէ զճանապարհն. հետ քեզ առ
եւ զնա՛:

Խորագիր. զրոյց. լիզվէ:
2 ավտուլ:
15 կարգաց:

Կոչեաց խալիֆան զՀալեւորն եւ ասէ .
 20 Արեկ զնա՝ հետ Ամիր Մուսինն ի Պղնձի քա-
 դաքն, զի դու գիտես զճանապարհն :

Ասէ . Քո հրամանք է :

3. Ասէ Ամիր Մուսինն ընդ Հալեւորն .
 Ի՞նչ պիտի հետ մեզ ի ճանապարհս :

25 Ասէ Հալեւորն . Պիտի հետ մեզ հազար
 ուղտ, որ զճուրն տանի . հազար ուղտ, որ
 զապրանք տանի . զի պիտի որ ի չորս աշխարհ
 մտենք . եւ է անջրդի եւ դարտակ ի մարդուէ ,
 ու քառասուն աւուր ճանապարհ է . սաստիկ
 30 հողմն լինի . թէ ի տկերն ընունք ջուր, նայ
 ցամաքի :

Ասէ Ամիր Մուսինն . Ապա ի՞նչ առնուք :

Ասէ Հալեւորն . Ա՛յ ի հետ մեզ հազար
 փուկա կուժ, որ ջուրն չցամաքի :

35 Ասէ Ամիր Մուսինն . Աղեկ ասցիր :

Եւ խրկեցին ի Մար եւ բերին կժեր շատ :
 Ելան առաջ եւ առին ի հետ երկու հազար
 ձիաւոր իւրանց ամէն սէհովն . եւ գնացին ի
 ճանապարհ բազում . եւ մտին աւեր աշխարհք
 40 եւ ելան մտին ի չէն աշխարհք : Եւ աւր մի եւ
 գիշեր ի լեառն եւ ի դաշտ այլ գնացին :

4. Եւ Հալեւորն երթայր առաջ եւ զաս-
 տեղքն նշան ունէր . նա յանկարծակի ամպ
 ելաւ եւ ծածկեաց զաստեղքն, եւ զճանա-
 պարհն կորուսաւ Հալեւորն . եւ ասէ ցԱմիր
 45 Մուսինն . Ձճանապարհս չեմ գիտենուլ, կո-
 րուսի . վասն այսորիկ կորուսի, որ ամպն
 ծածկեաց գերկինքն եւ զաստեղքն :

Ասէ Ամիր Մուսինն, թէ Ապա ո՞ր երկիր
 50 ենք :

Ասէ Հալեւորն . Չեմ ծանաթ երկրիս այս :

Ասէ Ամիր Մուսինն . Արեկ դառնանք յետ :

Ասէ Հալեւորն . Չկարենք դառնալ յետ :

Ասէ Ամիր Մուսինն . Գնա՛ Աստուծոյ ա-
 55 նուան ի վերայ :

5. Գնացին զողջ գիշերն ինչուր լուսա-
 ցաւ . կէս աւր ալ գնացին եւ էլան ի դուր
 դաշտ մի . նայ ծուխ մի կու երեւնար . եւ
 տեսան բարձր կուպայ մի . թվէր թէ երկինքն
 60 կու հասնի : Գնացին եւ մաւտեցան ի կուպան
 եւ տեսան ի մէջ կուպային բլուր մի մեծ . եւ
 չէնքն ամէն պատվական ակունք էր եւ առ

պատերն զմրուլթ . եւ ի չուրջն եազուլթ շա-
 րած կարմիր ոսկով . եւ զովին անհաս գեղե-
 ցիկ . եւ մեծութիւն կուպային չորս հազար
 ուղտաքայլ էր . եւ ան գերդ մուխ կու երեւ-
 նար . նայ շինած էր արծիճէ կուպայ մի այլ :
 Ոնց որ տեսաւ Ամիր Մուսինն՝ զարմացաւ ընդ
 աղվորութիւն կուպային . եւ էր ան կուպան
 անտէր եւ անմարդ . եւ բուն ճիշէր ի վերայ
 պարսպացն :

6. Կանգնեցաւ Ամիր Մուսինն եւ ելաց եւ
 ասէ .

Ոչ ով չունի իշխանութիւն

բայց մի Աստուած յաւիտենից .

Աշխարհիս մեծութիւն անցաւոր է ,

աստուծոյ մեծութիւն անանցաւոր է :

Ասէ Ամիր Մուսինն .

Աւաղ գեղեցիկ կուպայ ,

ո՞ւր են քո բնակիչքն .

Կամ ո՞ւր են, որ զքեզ շինեցին ,

զի կենդանի ի քէն ոչ երեւին ,

թվի չեն ծնել :

Ասէ Ամիր Մուսինն կաֆայ զայս , թէ

Գնաց ժամանակ սոցա

զինչ գերազ մթան գիշերի .

Այլ դառնալու չէ ճարակ

վայելել զոր հեղ մն թողին .

Աւաղ թող կարնա(ն)ք գիտել ,

թէ բարի դործով գնացին .

Կամ թէ հարվածովք անցան ,

որ չի մնաց առ մարդ մի հողին :

Հետ այս Կաֆայիս էլաց Ամիր Մուսին
 եւ ասէ .

Ո՞ւր են տէրքն եւ ծառայքն ,

ո՞ւր են հայրքն եւ եղբայրքն ,

Ո՞ւր են որ զայս շինեցին ,

զայս անգին վայելչութիւնս .

Որպէս ծաղիկ խոտոյ

թառամեցան եւ պակասեցան :

7. Ասէ Ամիր Մուսինն . Թող երթանք յա-
 րած եւ մտնուք այս կուպա եւ տեսնուք զիւր
 աղվորութիւնն :

Ասէ Հալեւորն . Քո հրամանք է . գիտե՞ս

64 կամիր :

66 ուղտաքայլ :

72 կանկեցաւ :

77 անանցաւոր :

79 ավախ :

83 չէն :

105 որ զինչ գրած է . լինի կարգաս եւ հանապաղ
 զովեա զԱստուած :

Ասէ Հալեւորն . Ո՞վ Ամիրայ . խնտա՛ եւ
 զոհացիր ի յԱստուծոյ , զի ուրախութիւն
 մեծ է , որ ազատեաց զմեզ ի մեծ որոգայթէ
 110 եւ ի դիժար ճանապարհէ եւ երեւ ի բարի
 ճանապարհս :

8. Եւ ասէ Հալեւորն . Գիտացիր , Ամի-
 րայ , զի իմ հայրն վաճառակաւն էր . եւ տեսել
 էր բազում աշխարհ եւ անցել էր տեղիք մի
 115 եւ մոլորել էր , որպէս եւ մենք մոլորեցաք եւ
 եկաք յայս տեղիս եւ յայսկից ինչվի Պղնձէ
 քաղաքն մէկ ամսու ճանապարհ է : Երթանք
 ի հետ ծովեղերին եւ բաժնիք ի ծովեղերն եւ
 երթանք ի հետ լեռանց . անդ կան ծառք պլտ-
 120 զարեք գեղեցիկ տեսաւք :

9. Ասէ Ամիր Մուսինն . Աստուած զքեզ ա-
 լետեաւք առնէ . յառաջ ի յայս կուպաս
 մտնենք : Եւ գնացին մտան ի կուպան եւ տե-
 սան զովին ի բաց , յառաջի դրանէն մինչ ի
 125 մեկալ դուռն կայր ապրիլովիկ մի : Հայեցան
 եւ տեսին չէնքն . նայ ի վերայ գրած էր , որ
 Ամիր Մուսինն չի կարաց կարգալ :

Եւ ասէ Ամիր Մուսինն . Ո՞վ կարէ կար-
 ցալ զայս գիրս :

130 Ասէ Հալեւորն . Ես գիտեմ վեց ցեղ գիր
 գրել եւ կարգալ : Երեկ Հալեւորն եւ կար-
 ցաց : Եւ էր գրած յուներէն գրով . նա մեկ-
 9 նեց յուներէն ի տաճիկ լեզու . եւ այսպէս էր
 գրած .

135 Մարդ որ յայս տեղս գայ ,
 թող լան զմեզ ու ինքն խրատի .

Որ ամենայն ընչից

մնացել են դարտով ի լի ,

թէ չէ թող գնա տեսնու

140 իրք զարմանալի :

Յայն ժամ Աստուծոյ փառք տայ

100 եւ միշտ կենդանի :

10. Լսեց Ամիր Մուսինն եւ ելաց դառ-
 նապէս եւ ասէ .

145 Ո՞ւր են իրենց տէրքն , զի մեզ կու
 յայտնէ .

Որ մենք այլ ենք գնալու հետ զացայ :

Գրած էր թէ

120 պողպարեք :

122 աւետաւք :

123 մտենք :

Մահն բաժանեց զմեզ ի այս մեծութենէս ,
 150 եւ անդադար ժողովէաք զգանձն ,

եւ հանկիստ ոչ ունէաք .

Մինչեւ անցաք յաշխարհէս ,

ու ի հող մտաք .

Եւ յետոյ համարս տալոց ենք Աստուծոյ ,

155 զոր ինչ եւ գործեցաք :

Եւ Ամիր Մուսինն ելաց դառնապէս եւ
 ասէ . Օրհնեալ է Աստուած , որ կայ եւ մնայ
 յաւիտեան :

11. Շինուածին եւ զեղազործին նման ոչ
 կար . եւ կար գրած յերկու դուռն գիր : Ասէ 160
 Ամիր Մուսինն ցՀալեւորն . Արեկ կարդա : Եւ
 այս էր գրած .

Տեսէք թէ քանի մեծութիւն ունէաք

եւ քանի կերաք եւ խմեցաք .

Եւ յետոյ կերակուր որդանց եղանք .

165 Ամէնտ հետ մեզ էք գալու .

Դուք խնդրեցէք յԱստուծոյ զայն կեանքն

զի այս կեանքս անցաւոր է :

Քանի Աղամայ որդիք են եկել

170 յայս կեանքս ու տեսել ,

Ու գերդ զանասուն անբան կենդանիք

են աստ մոլորել .

Ան որ իմաստուն է լեալ ,

հեշտ է նա զայս կեանքս իմացել .

Ու գերծ կացել յայս կենացս ,

175 ու յանտէնն զիւր տուն է չինել :

Ամիր Մուսինն շատ էլաց եւ տրմեցաւ :
 Եւ տեսաւ եւ զարմացաւ եւ լսեցաւ իրք զար-
 մանալի . զի չարթէ աշխարհս ոչինչ . աղքա-
 տութիւն լաւ է քան զմեծութիւն . եւ ասէ . 180
 Օրհնեալ Աստուած :

12. Եւ տեսաւ Ամիր Մուսինն զկուպան
 դատարկ ի մարդով . եւ կայր ի մէջն կուպայ
 մի այլ եւ բարձր երեւնար մինչեւ յաւրն .
 երեք հազար գերեզման մարմարիոն ի շուրջ 185
 կային : Եւ կար գերեզման մի մեծ եւ գրած
 ի վերայ գիր եւ ոսկի ի գիրն լցած : Ասէ Ամիր
 Մուսինն ցԱլեւորն . Արեկ կարդա : Եւ այս
 էր գրած .

Հաչվէ թէ քանի՞ բարի

190 յայս անուն կեանքս վայելցեր .

Ու կամ թէ քանի՞ քաղաք ու բերդեր

յայլոց խլեցեր :

167 կենքս :

174 յիմացել :

179 չաջէ :

187 ցաց :

190 հաջէ :

192 բերթեր :

41 զաստեղն :

48 զասին :

52 յարեկ :

60 մոտեցան :

Հիմիկ եւ խաւար մտաւը
 195 ու որդունքն այլ դան ի քեզ.
 Ինչեր ունիս պացխուն տալու
 որ այս կեանքս զրկեցեր:

13. Յորժամ լսեց Ամիր Մուսին՝ էլաց
 դառնապէս եւ մտաւ ի կուպա մի այլ, որ
 200 ունէր ութ դուռն. չորս դուռն յուտ էր եւ
 չորս դուռն սանտալ յուտ, ոսկի բեւեռաւը
 եւ սանտալն արծաթի:

Առաջի դուռն այսպէս էր գրած.
 Եկն ինձ մահ եւ ոչ կարացի զերծանել
 205 կամ ճարակ գտանել.
 Եւ ոչ բազում հեծել իմ
 ազնեցին ինձ.
 Ոչ ազգականք իմ ազնեցին ինձ.
 Ի ամենայն մեծութենէս տարան զիս
 210 չալկող եւ փորող մի.
 Եւ ամենայն մեծութենէս իմ
 այլոց եղեւ.

Թող ի աշխարհս զոք չի խարէք,
 Տեսէք թէ մարդ ինչ կարէ առնել
 215 Երբ արարչին հրամանքն կու հասնին
 Յայս աստուծոյ ինչ շահ կայ
 Երբ մահուն աւրն զալոց է,
 Որ զաղէկ ու զգէշն կու տանի.
 Զան մարդն վայ՛, որ ի մեղս մեռանի
 220 եւ զմեղքն սիրէ:

14. Երբ մտաւ ի կուպայ մի այլ եւ կայր
 զերեզման մի այլ եւ կար պնակիտ մի երկաթ-
 թի. երեկ հալեւորն եւ կարգաց. եւ գրած էր
 այսպէս.

225 Յանուն Աստուծոյ անմահին.
 Ով որ վայ ի այս տեղս, նա իմանայ,
 Թէ ինչ ցեղ է ժամանակիս զնացքն.
 Մի ապաւինիք յաշխարհս
 եւ մի իւր ազգութիւնն.
 230 Զի խարող է եւ անցաւոր
 իբրեւ զերազ զիշերոյ:

Եւ գրած էր այսպէս.
 Ես էի մեծ թագաւոր,
 տէր ամէնի որ կու հայիք.
 235 Եւ կար ինձ բազում բերթ ու քաղաք
 որ գնեւու չէ ինձ կարիք.
 Ազամայ որդիք, դուք մի խարիք:

194 մտաւը, կարդալ մտել:
 215 երբ:
 227 զնացքն:

15. Յերրորդ դուռն այսպէս էր գրած.
 Արարչին արարածոց դուք յուսացիք,
 Որ զալոցն է երկրորդ անգամ
 եւ դատելոց զինչ կայ հոգիք:
 Ես հերիք ձեզ աւրինակ,
 դուք մի յանշահ կեանքս խարիք.
 Լաւ որ յանդէն շինէք
 240 ժառանգութիւն եւ հայրենիք:
 (Եւ գրած էր) Թէ
 Ես տէր էի ԺՌ քաղաքի պարսպաւորաց.
 Եւ ունէի ԾՌ թագի ձի եւ Ռ թրաւոր
 եւ դանձ անշափ եւ անհամար,
 Որ ոչ ունէի կարիք աստուծոյս,
 245 բայց միայն կեանք.
 Եւ ապրեցայ ձՄ տարի
 կենաւը բարի ուրախութեամբ,
 Եւ թվէր ինձ թէ մահ ոչ կայ
 մինչեւ յաւիտեան:
 250 Երբ երեկ աւր մահուն, ապայ իմացայ,
 որ ոչ խնայէ յերիտաւոր եւ ի տղայ,
 Եւ ոչ աղքատ եւ ոչ ի մեծութիւն.
 Երբ մահն երեկ, ասցի
 255 թէ բերէք զիմ հազար թրաւորն.
 Ասցի թէ կարէ՞ք թափել թէ ոչ,
 նայ ասցին թէ պահ մի
 չի կարեմք ազնեկ քեզ,
 Յետոյ մեռայ. ինձ անուն ասեն Քոչէս:

16. (Գրած էր թէ)
 Մեռած թէ հազար եմ:
 Ես տէր էի զինչ որ կու հայիք.
 260 զէս կու զրկեաք զաշխարհս,
 ինչուր մահն ասաց թէ հերիք.
 Լուք թէ հայիք ի յիս,
 աւրինակ եմ որ խրատիք:
 Եւ ի ներքի գէհն գրած էր այս կաՓաս.
 265 Զինչ գանձ ու կուժաշ կայ ինձ,
 որ ի մէկ տեղի ժողովեր,
 Զի կարցին ինձ աւրիկ մի ազնեկ,
 զի կենաց ճարիկն էր հատել:
 Երբ լսեց Ամիր Մուսին խիստ էլաց եւ
 աղաւաղեաց զաշխարհս:
 17. Եկին ի վեցերորդ դուռն. եւ էր
 գրած այսպէս.
 Է՛ Ազամայ որդիք
 հանցկուն է՞ր էք անգիտացել,

243, 305 կենքս:
 266 հազար կարդալ հաւոր:
 278 ազգաւորաց:

Զանձխիթար զալիքն
 ու զմահուն աւրն մոռացել.
 275 Տեսէք թէ քանի մարդիք
 յԱզամայ ի վեր գնացել,
 Ամէն հողուն եղան,
 դուք է՞ր էք զահն մոռացել:
 Եօթներորդ դուռն գրած էր այսպէս.
 280 Աստուծոյ որդորն
 ի երազ զիշեր նման է.
 Զի խիստ կու խարէ այս կեանքս.
 Վա՛յ նարայ որ խիստ կու սիրէ.
 285 Էյնիկ ան մարդուն ասեմ,
 Որ անտէնն իր տուն կու շինէ.
 Որ երբ Աստուծոյ յառջեւ զնա տարին,
 նայ ինքն չամաչէ:

18. Ութերորդ դուռն այսպէս էր գրած.
 Է՞ր չէք ի խրատ խրատիլ մարդիք.
 290 Թէ մահուն աւրն զալոց է,
 մոռնաք զանգիման դատողն,
 որ զամէն մարդ ի հաւն կու գիտէ.
 արդար դատաւոր է նա,
 որ պեղծ մարդուն մեծ աւր կու պահէ.
 295 հատումն չունի տանջանք,
 լուկ անանց հուրն կու էրէ,
 եւ ես որ կու սիրէի զայն կեանքս,
 ուսկայ կամ հողացել
 եւ կերակուր որդանց եղել:
 300 Աս տուն մեծ է եւ թագաւորական,
 եղեւ ամենայն ինչ ունայն.
 Մարդ որ լսէ, թող պատրաստ կենայ
 յամէ չարէ.
 305 Այլ զայն ի միտ անէք,
 որ համարս տալոց էք առաջի Աստուծոյ:

19. Եւ տեսան սեղան մի եաղութ զե-
 ղին. եւ ոտվին կանանց զմրութ. եւ էր իր
 բոլորութիւն հինգհարիւր թիւ. եւ ի շուրթն
 գրած էր այսպէս.
 310 Զինչ կայ զեղեցիկ շինուած
 մահն դայ զամէն աւրիք.
 Թէ չէ դու հայեց ի դա,
 Թէ շինողը իրեն տամուկ (°) է.
 315 նոյնպէս ամեցոյ զաշխարհս,
 ու աղէկ զինք դու ձեւէ.
 Ու երկնաւորին տուր փառս,
 որ ամէն հողաց կու տիրէ:

289 աստուծոյ:
 328 թագաւորական:

Եւ այս սեղանս թագաւորական է եւ ար-
 վեստաւը բերած է ի կուպաս. եւ գրած էր
 ի սեղանն, թէ
 330 Հազար միակնի թագաւոր են կերել յիս
 եւ ճաշակել.
 զերդ զայն որ երկու աչք ունէին.
 յետոյ մտան ի զերեզման:
 Եւ Ամիր Մուսին երես զամէն գրել. եւ
 335 էառ Հալեւորն զԱմիր Մուսին եւ սկսան գրել
 ինչուր վի կէս աւր:

20. Գնացին շատ աւեր աշխարհ եւ տե-
 սան մեծ լեռուն մի. եւ ան լեռուն մեծ իրք մն
 կանկնած եւ էր ինքն զարմանալի. կանչէր
 340 եւ ասէր. Փառք Աստուծոյ բարձելոյն, որ
 զայս չարս ի վերայ ինձ արար:

Ասէ Ամիր Մուսին. Մէկ հարցէք, որ
 ասէ զիւր պատճառ:
 Ասէ Հալեւորն. Ես կու վախենամ:
 345 Ասէ Ամիր Մուսին. Ոտքն ու ձեռն կա-
 պած է. ի՞նչ կարէ անել:
 Եւ մաւտ զնայ Հալեւորն եւ ասէ. Ի՞նչ
 մարդ ես. կամ ո՞վ է զնտանել զքեզ ի հաւտ:
 350 Պատասխանի ետ եւ ասէ. Ես քաջ եմ:
 Ասէ ցնա Հալեւորն. Զքեզ ո՞վ է զըն-
 տանել:

21. Ասէ քաջն. Իմ զրոյցն արմացք է.
 մէկ մն կար եւ ասեն անուն նորա Աւտուլ
 Աղիզ, եւ ունէր կուռք մի. եւ իրեն նշանքն
 355 կարմիր եաղութ էր. եւ ես պահնորդ էի այն
 կուռքն, եւ ունէր հեծել հազար հազարաց եւ
 քաջք բազումք. եւ քաջքն ամէն յիմ հրա-
 մանքն էին: Եւ ունէր դուստր մի մեր թա-
 գաւորն զեղեցիկ: Եւ Սողոմոն ելչի խրկեց,
 360 թէ Տուր ինձ զդուստրդ ի կնութիւն. եւ կո-
 տորէ զկուռքն եւ հաւատա իմ Աստուծոյն.
 ոչ կայ այլ աստուած քան զնա, որ արար
 զերկինս եւ զերկիր: Թէ լսես՝ ապրիս, թէ
 չէ պատրաստ կայ ի կովէ:
 365 Ասէ թագաւորն ընդ իւր իշխանքն, թէ
 Հասկցիք թէ Սողոմոն ինչ գրել է. թէ կո-
 տորէ զկուռքն եւ տուր զքոյ դուստր ինձ ի
 կնութիւն եւ հաւատա յիմ Աստուծոյ:

328 Աղթ. Այս սեղանս Զմրութ թագաւորին է.
 հազար թագաւոր կերակրել է ի վերայ սորա:
 333 զարդ:
 353 Աղթ. Ասաց Քաջն. Կայր թագաւոր մի
 Արդաղիկ անուն. ինձ քրոջ որդի էր. եւ ունէր
 երկու կուռք, կարմիր աղութ եւ սպիտակ:
 362 ասվածն:
 365 Աղթ. պատրաստեալ զքեզ ի պատերազմ:

370 Ասցին իշխանքն, թէ նա քեզ ի՞նչ կարէ
առնել. թէ դայ՝ մենք կոզլինք:
Ես խոսմար էի. մտայ ի կուռքն եւ ի
խաւար հանի. ապի թէ Մենք առնուք զնորա
կարողութիւն եւ տանք մեր հեծելիս:
375 Յորժամ լսեց զայս թագաւորն, ուրա-
խացաւ եւ զելլին ծեծեց եւ արար պեղծ պա-
տասխանի. Ասա՛. թէ դու (առ) իս ոչ գաս,
ես առ քեզ դամ:
Գնաց եւ ասաց Սողոմոնին:
380 22. Եւ Սողոմոն թագաւորն աջողցաւ եւ
երբ քաջք եւ մարմնաւորք անչափ. զգանձն
երաց եւ զամէն հողքեց: Եւ Սողոմոն աջող-
ցաւ ի մէկայլ դէհէն եւ գաղանաց հրա-
մայեաց, որ երկու բաժին եղան. կէսն ի աջ եւ
385 կէսն ի ձախ. եւ թուչնոցն հրամայեաց, որ ի
աւելիցն ի վար կովէին: Եւ նստաւ Սողոմոն
հաղութ թախտն եւ վէղիւրին հրամայեաց
Դէմէտիւնին, թէ Դու ձախ դէհէն կայ, եւ
Քարիմատին՝ աջ դէհէն. մարմնաւորք եւ
390 քաջքն յառջեւնուն:
Եւ թագաւորն մեր ելաւ իւր հեծելովն:
Առաջին մենք զիպաք յի(ր)ար. եւ մեր
կուռն է կրակ եւ թիւնք չար:
Դէմէտիւնն կանչեց. նայ ինձ թվեցաւ,
395 թէ անդունդք պատառեցաւ ի նարայ ահեղ
ձայնէն. եւ թուչունք կովէին ի աւելիցն ի վար
եւ գաղանքն ի գետնէն:
Եւ ես իմ զաւրաւքն փախայ: Դէմէ-
տիւնն ի հետ արար. երեք աւր ինչուր հա-
400 սաւ: Ես ընկայ եւ թալցայ որպէս մեռել.
զիս կալաւ եւ հոր տվին փորել. զիս ի ներս
զերին եւ մատնէհրեցին քարն եւ երկաթն եւ
ի պղինձն: Այս է իմ հանգիստն մինչ ի դա-
լուստն Քրիստոսի կամ ի մեծ չարչարանքն:
405 Եւ այս էր իմ զրոյցն:
23. Ասէ Ամիր Մուսին, թէ Հարցէք իւր
կերակուր ի՞նչ է:
Ասաց թէ մենք ոչ ուտենք եւ ոչ խմենք:
Ասէ Ամիր Մուսին. Աւրհնեալ է Աս-
410 տուած, որ կայ եւ մնայ յաւիտեան:
Ասէ Հալեւորն. Երեք բան հարցնենք,
ասա՛ մեզ:
Ասէ. Քանի կամիս հարց:

372 խոսմար. Աղթ. եւ անբախտ էի եւ տխ-
մար եւ չփայտած:
387 համայեաց:
399 ինչաւր:

Ասէ Հալեւորն. Առ ձե՞ղ ես ան զեւքն,
որ Սողոմոն ի պղնձի կուռքերն էած:
415 Ասէ Քաջն, թէ Հայեաց ի ծովն, որ
կուռ կուռ կ'այնէ. հետ լերինն մարդիք են
ընակել:
Ասէ Հալեւորն. Ընդ ո՞ր երթանք ի
Պղնձէ քաղաքն:
420 Ասէ Քաջն, թէ ի հիւսուսոյ դէհէն. այլ
ճար չի կայ քանց ընդ այն:
24. Եւ սկսաւ գնալ. եւ գնացին բազում
աւրեր աշխարհ. եւ հասան ի մեծ լեռն մի
եւ հրեւցաւ քաղաքն սեւադոյն. եւ երկու
425 տեղ էրեւնար որպէս բոց:
Ասէ Ամիր Մուսին ընդ Հալեւորն, թէ
Այն սեւն ի՞նչ է:
Ասէ Հալեւորն. Պղնձի քաղաքն է. ու
զրած ունիմ, որ իւր պարիսպն սեւ քար է
430 եւ երկու պղնձի պուռնն ի վերայ գրան կայ,
յորժամ արեգակն ցաթէ եւ փայլէ՝ Պղնձի
քաղաքն վասն այնոր ասեն:
Եւ սկսան գնալ եւ մաւտեցան եւ տեսան
խիստ գեղեցիկ: Եւ էր բարձրութիւն պարս-
435 պին վաթսուս կանկուն, եւ դուռն հիսուն.
եւ թվէր թէ միակտոր էր պարիսպն:
25. Ասէ Ամիր Մուսին. Ձեմ տեսնուլ
զայս քաղաքիս դուռն:
Ասէ Հալեւորն. Գրած ունիմ, որ հիսու-
440 ներորդ դուռն է. տլըմով պիտի բանալ:
Ասէ Ամիր Մուսին. Ապա ինչ անենք:
Ասէ Հալեւորն. Երկու աւր հանկիր եւ
թտպիր արա, թէ ինչ ցեղ մտնենք: Իջան եւ
445 թտպիրեցին. եւ հեծուցին երեք ձիաւոր եւ
քաղաքովն ի շուրջ եկին. եւ ցած տեղ չի
գտան քանց զայն, որ իջել էին: Եւ Հալեւորն
խառ զԱմիր Մուսին եւ զԴալիւն եւ ելան ի
լիստն մի, որ մաւտ էր ի քաղաքն. եւ տե-
սան մարմարիոն սալեր եւ ի վեր սալերուն
աղվոր բան էր գրած:
26. Ասէ Ամիր Մուսին ընդ Հալեւորն.
Արեկ կարդա. եւ գրած էր այսպէս.
Է՛ Աղամայ որդիք, դուք մի խարիք,
Բերէք զխելիւր ի վերայ,
Եւ աղէկ մտաւք իմացիք,
Քալտի ձեր ամէն մարմինս.
Եւ անդէն հուրն կու մնայ.

417 Աղթ. Կուրկուրիս լեռան մօտ է:
437 միացկտոր. Աղթ. միակերթ:
439 զայս:

Ունինք դուք պացխուն տալու,
465 ձեր դործոցս, որ մէկ չի մնայ:
Է՛ Աղամայ որդիք,
զԱստուած էր հանց խիստ մոռացաք,
Ամէն աւր նոր մեղք դործենք,
վի բարուն խիստ կու հեռենանք.
470 Դարձիք ի պեղծ դործոցս,
որ անդէն հրոյն չլինենանք.
27. Այնժամ եկին ի հեծելն ու ասցին,
ի՞նչ ցեղ մտնեք ի քաղաքս եւ տեսնունք
զիւր գեղեցիկ շէնքս. զի ինձ հանց աղվոր
475 թվի, որ այլ չկայ ի վերայ աշխարհի. թէ
մտնեք, շատ գանձ տանինք մեր Սալիֆային:
Ասէ Ամիր Մուսին. Ձուզեցէք սանտուխտ
մի. զի կային ի հեծելն որ հուսնութիւն գի-
տէին. ու զարբնութեամբ զուգեցին սան-
480 տուխտ եւ դրին ի պարիսպն ի վեր:
Ասէ Ամիր Մուսին. Ով ելնէ ի վեր:
Ասէ մէկ մի հեծելէն. Ես ելնեմ եւ բա-
նամ.
Ասէ Ամիր Մուսին. Ել Աստուծոյ ա-
485 նուան ի վերայ: Եւ ելաւ ի պարիսպն վե-
րայ, ծափ է դարկ եւ ասէ. Շապաշ, շապաշ.
եւ ընկաւ ի քաղաքն ի վար:
Ասաց Ամիր Մուսին. Այս խելաւքի բան
է: Եւ էլան եօթն հոգի եւ ամէնն զան բանն
490 ասացին եւ ընկան ի քաղաքն ի վար եւ
մեռան:
28. Ասէ Դալիւն. Ձէ կարէ այլ մարդ
եկնել քաւէլ ես:
Ասէ Ամիր Մուսին. Ձկայ այլ մարդ խե-
495 լաւք քան զքեզ, թէ դու այլ զերդ զնաք լի-
նիս, մեր ճարն թողուլն է ու յետ դառնալ:
Ասաց Դալիւն. Յանուն Աստուծոյ. եւ
ելաւ ի վեր եւ զափն յերար էղարկ:
Եւ ասաց Ամիր Մուսին. Ահա կորաւ հետ
500 նացս:
Դալիւն յոտն էկաց եւ ասէ. Ով Ամիրայ,
մի վախել, զի փրկեաց զմեզ Աստուած ի
մեծ որոգայթէ:
Ասէ Ամիր Մուսին. Ի՞նչ տեսար:
505 Ասէ. Տեսայ տասն տասն աղջիկնի գեղե-
ցիկ. ասէին. Արեկ առ մեզ: Ես կամէի գնալ,
նայ ինձ թվեցաւ, թէ ծով էր ինչուր իրենց
մաւտ. նայ յիջեցի զանուն Աստուծոյ եւ ան-

506 դալ:
510 մեռած:

երեւոյթ եղան: Մեր կարճերս ուսկայն ի
պարսպին տակն մեռան:
510 29. Ասաց Դալիւն. Յանուն Աստուծոյ.
եւ իջաւ ի քաղաքն եւ գնաց ի յայն տեղն,
որ պղնձի պուռնն էին. եւ ունէր պղնձի
զով ի նմանութիւն ոսկոյ. եւ փակն չէրե-
ւէր. եւ կար ի մէջն պղնձի ձիաւոր մի եւ ի
515 ձեռն գրած էր, թէ Զրեւնու որ ի վերայ
պորտուս է, ի ժուռ ած տասնեւերկու հետ՝
մայ դովին բացվի: Ի ժուռ էած եւ էրաց
զդուռն. եւ տեսան զմարդիքն մեռած:
Ասէ Ամիր Մուսին. Այս լինի թէ դուրն- 520
պներն տեսան եւ գտան զբանալիքն. ոնց ա-
ռին, զէտ զհող փշրեցան:
Ասէ Ամիր Մուսին, թէ կէսն հեծելին
մտնն ի քաղաքս, եւ կէսն ի դուռն կենայ:
Եւ ինքն հեծաւ եւ վողիւրն եւ կէս հեծելն 525
մտան ի քաղաքն: Ձքաղաքն խիստ գեղեցիկ
տեսան. զշուկան՝ կարմիր եւ կանաչ տախ-
տակով զուգած. եւ կուսաւն փռած. եւ
տէրքն մեռած: Եւ զարմացան յիւր աղվո-
րութիւնն: 530
30. Եւ շուկանին պատուական էին եւ
ամէն մարդիքն մեռած. լացին. եւ տրամե-
ցան. եւ տեսան զգանձն կուտած եւ դովին
ի բաց. եւ ջուրն վաղէր ի վերայ պաղջանոյն
ի բուքայէն ի վար. եւ մրգաբերքն մրգե- 535
րով. եւ ամէն ծաղկունքն զարգարել:
Եւ մտան ի յայն շուկայն, որ բախըլին
կային. եւ տեսան զէլէլովին ի կախ եւ մար-
դիքն նստած եւ մեռած. եւ ակունք եւ ոսկի
եւ մարգարիտ կուտած. ոչ ծախս կար եւ ոչ 540
գնաւ: Եւ տեսան զայն շուկան, որ ջուհա-
րիքն էր փռած եւ զայն պատվական ակունք՝
անտէր: Եւ տեսան զայն ողորմ տեսիլն եւ
շատ լացին:
Եւ ասաց Կաֆայ զայս. 550
Աւաղ զքեզ, աղվոր քաղաք
որ չի կայ ի քեզ կենդանի.
Ամէնն են ի հող դարձել,
տէր չի կայ, խանութնիս ի լի.
Մակար թէ չէաք տեսել, 555
իրք զարմանալի:
Վա՛յ թէ մենք ալ հանց լինինք,
զերդ սոքա ողորմ ու լալի:

517 պարտուս:
521 դուրնպներն այն է դոնապաներ:
535 բրբա՛յ:
537 մտայն:
555 չէ աչ:

31. Եւ զնային տեսան զթագաւորին
560 զարպանուն զովին ի բաց եւ մարդիքն մե-
ռած. եւ ասպարնին կախած՝ հալելորք եւ
կտրճերք. եւ այլք ի վերայ բարձերու նստած
եւ մեռած: Ամէն ի քուն թվէր մեղ: Եւ ա-
սաց Ամիր Մուսին կաֆայ զայս:

565 Իկէք նոր արմաքը տեսէք,
սուք առաք մենք անմխիթար.
Մակար թէ չէք եկել
ու տեսել չնցեղ դէշ ու չար.
Բայց փառք արարչին ասեմ,
570 որ ինքն է Աստուած բարերար,
Որ զմեզ յարուցեալն աւեր
չի ձգէ ի հուր վ՛ ի խաւար:

32. Եւ տեսան զթագաւորին զովնուն
չէնքն, որ նաչխած էր կարմիր ոսկով եւ ի
575 չմերուն վերայ զրած էր կաֆայ այսպէս.

Գեղեցիկ դովունք եւ թաղվորական,
Շինել չկարէ մարդ զդա, ոչ ոսկի նման,
Դուք վա՛յ շինողացս տուք,
որ չվայլեցաք զինքս միաբան,
580 Գնացաք ու տեղիս թողաք,
մեր ամէն ոսկերք հողացան:

Երբ լսեց Ամիր Մուսին՝ թալցաւ. ջուր
լցին ի վերայ եւ հողի ամին:

33. Եւ մտան ի զարպաս մ'այլ. եւ կայր
585 չորս սանտուխտ. եւ սանտուխտին սիւներն
ոսկի. եւ չորս սիւն այլ կար զարպասին
ոսկի եւ սիւնազլիներն կարմիր եաղութ, եւ
նաչխած կանաչ զմրութով եւ կար ի վերայ
նորա տախտակ մի ոսկի եւ պատվական ակ-
590 ներով զարդարած: Եւ կար ի վերայ տախտա-
կին դեղին եաղութ աթոռ մի. եւ կար ի վե-
րայ աթոռին թագուհի մի յոյժ գեղեցիկ,
զերդ կենդանի. եւ կար ի գլուխն թագ մի,
որ զին ոչ կար. եւ մազն ամէն մարդրտով
595 եւ ակներով շարած. եւ կար ի վիզն շարոց
մի մարգարիտ, որ ամէն հատ ածէր հազար
կարմիր. եւ ակն անհամար, որ ոչ կարէին
հայել ի լուսոյն, որպէս արեգակն փայլէին:
Եւ ունէր ի հազուադէպ բեհեզս եւ ծիրանիս.
600 Եւ աչվին զերդ ծով էրեւենար որպէս կեն-
դանոյ:

34. Ոնց որ տեսաւ Ամիր Մուսին ընդ
ազվորութեան եւ ընդ ձեռաց փափկութեան,
ծունր էած, զիտաց թէ կենդանի է: Երբ
605 զբարեւն չհառնա՝ տրտմեցաւ Ամիր Մուսին:

604 եփ:

Ասէ Դալիֆն. Ո՛վ թագաւոր, թագու-
հիս մեռած է:

Ասէ Ամիր Մուսին. Չե՞ս ի տեսնուլ, որ
ի մեղ կու հայր:

Ասէ Դալիֆն. Չաչքն հանել են եւ տեղն
610 սնտրիկ է զրած եւ զաչքն ի տեղն զրին. քանի
քամի ելնէ, զաչքն շարժէ:

Ասէ Ամիր Մուսին կաֆայ զայս.

Անգին ու աննման դուհար,

ա՛մ դու է՞ր ես անպիտացել.

2ինչ զքեզ ազվոր

հողեղէն մարդ չէ տեսել.

Աւաղ տամ հազար բերան,

քո քաղքիս, որ չես վայելել.

Ես փառք Աստուծոյ տայի,

թէ ընդ իս պահիկ մն խաւարս:

35. Եւ կար առաջի թագուհոյն՝ երկու
մարդ կանկնած, մէկն սեւ ու մէկն սպի-
տակ. սեւն ունէր թուր քաշած եւ սպիտակն
620 ունէր դուրդ ի ձեռնին. եւ կար ի թագու-
հուն զիբկն պնակիտ մի ոսկի, կարմիր լաճ-
վարդով զրած:

Ասէ Ամիր Մուսին ընդ Հալեւորն. Արեկ
կարգա՛:

Եւ զրած էր այսպէս.

Յանուն Աստուծոյ: Ես էի տասն տարե-
կան երբ մեռայ. քանզի մահն ի թագաւորէն
ոչ վախենայ, ոչ աղքատին խսկի խղճայ եւ
ոչ տղային կու ողորմի, ոչ ի ծեր խնայէ,
630 յԱզամայ ինչվի այսաւր: Ո՛վ են նոքա, կամ
ուր է Աղեքսանդր, որ տիրեց զչորեքան-
կին աշխարհս. եւ երեկ ի յայս քաղաքիս
վերայ. եւ ոչ կարաց առնուլ: Դուք որ կեն-
դանիքէ էք, մի թողուք զձեր իրքտ այլոց,
640 որպէս եւ մենք թողաք: Ես եմ Նիրմոտ թա-
ղաւորին դուստրն. եւ մեր պուռներն ոսկով
ի լի էր. եւ հորերս արծաթով. եւ շատ ոսկոյ
քան կայ մեր աշխարհն. եւ մարդարիտն ի
մեր ծովէս կու ելնէ: Վասն այս շատ դան-
ծուցս զայս ամուր քաղաքս շինեցաք. որ ոչ
645 կարէր աւտարական մտանէր: Մեռաւ հայրն
իմ եւ ես էի հինգ տարեկան. կալայ զաթոռ
հաւր իմոյ եւ ժառանգեցի եօթն տարի եւ
մեռայ:

623 կանկած:

625 դուրդ. Աղթ. բլթակ:

636 ազէ կամար:

640 Ներմոտ. Աղթ. Չմրութ:

642 իլնի էր:

648 իմում:

650 36. Եւ զրած էր կաֆայ այսպէս.

Ո՛ւր են թագաւորք երկրի,

որ առաջ զանվանքն յիշեցի.

Եւ կամ քանի քաղաք եւ բերդեր

յերկիր շինեցին.

655 ինչ մահն ի վերայ երեկ

նայ ամէնքն զարտակ զնային.

Իւրեանց անհուն զանծէն

լուկ իւրեանց հետ փող մն չառին:

Եւ զրած էր այսպէս թէ Ութ տարի մեր
660 երկիրս անձրեւ չերեկ ու կանանչին հատաւ:
զոսկին պարապար հացի տայաք եւ ոչ
գտանէաք. եւ մարդ զմարդ ուտէր, ուժովն՝
զանուժ, պարոն՝ զծառայն, աղքատն՝ զաղ-
քատն: Երբ զիտացին, որ բարկութիւն Աս-
665 տուծոյ էր, ես զրեկ տվի զայս բաներս եւ
զմեր հողեստանս յԱստուած յանձնեցաք:

Եւ զրած էր այս կաֆաս.

Խրատ մ՛ կամիմ տալ քեզ

թէ հազար եմ խիտտ տխմար.

670 Գիտեմ որ մեռնիլ կամիս,

որ չի կայ քեզ աշխարհի ճար.

2սիրտդ քո զորդ պահէ,

հետ ի քո ազգիտ վի աւտար.

Ի պաս վի աղաւթք կացիր,

675 զի տապանն է մութն ու խաւար:

37. Եւ այս էր քաղաքս իմաստասիրաց՝
չինած Յունաց հրամանաւն եւ տլրամովն.
Եւ զինչ այս քաղաքս ամուր քաղաք չի կայ ի
աշխարհիս վրայ: Բայց աղաչեմ զձեզ, ով
680 մտանէք Աստուծոյ հրամանաւ, զանծ եւ
կուճալ շատ, առէք որչափ եւ կարէք, բայց
զայս իրքս, որ իմ վրայ է՝ մի առնուք, վասն
սիրոյն Քրիստոսի: Այսչափ իրքս է իմ բա-
ժին, որ առել եմ, ով որ զայ եւ տեսանէ զիս
685 եւ ճանաչէ, որ ես թագուհի եմ, երդմեցու-
ցանեմ զձեզ Աստուած, որ չառնուք ի մարմ-
նուս իրք մն:

38. Ասաց Ամիր Մուսին հեծելին, թէ
բարձէք անչաք, որ կարէք այս պատուական
690 զանծէս:

Ասէ Դալիֆն ընդ Ամիր Մուսին. Կամի՞ս
զայս ակունքս թողուլ, որ վերայ թագուհուս
է, քան զայս պատուական իրք այլ չկայ ի
յայս կուպաս. առնուք, խալիֆային տա-
695 նինք:

666 անծնեցաք:

673 ասքիտ:

685 ճանաչէ:

Ասէ Ամիր Մուսին. Երդունն է զրեկ. այս
ամէն ակներովս ու գանձովս չենք կիշտա-
նալ, ոչ ատով ալ չենք կիշտանալ. թէ հա-
զար ակունքս պատվական է՝ մեծ խեղճ է
մեզ:

Ասէ Դալիֆն. Աստուած զինքս կենդանոյ
է հրամել. զարա պատանք մն հերիք է. թէ
դու չես ի առնուլ, ես կ'առնում:

Ասէ Ամիր Մուսին. Ես անպարտ եմ
արեւէն դորա:

39. Յառաջ տարաւ Դալիֆն զձեռն ի
թագուհին, զերդ որ բռնեց, ան սպիտակ
մարդն, որ զպլէթկին ունէր, էզարկ ի վերայ
թիկնացն. եւ սեւ մարդն որ զթուրն ունէր՝
էզարկ ու զգլուխն թուրց:

Ամիր Մուսին փախաւ եւ զարմացաւ ընդ
տեսիլն. ասաց՝ թող Աստուաց աջողէ քո
տլրամիտ եւ այս պահնորդներուս, եւ ոչ
ողորմի դորա, որ այս ամէն գանձովս չի
կիշտացաւ. ու այս ոչինչ իրքս տամահաւ,
715 որ չէր պատիհ: Եւ ասաց կաֆայ զայս:

Խրատ մն տվի ես քեզ,

էր չարեր, այ՛ իմ սիրելի,

Գիտես որ ասցի ես քեզ,

մի հասնիր դու առ թագուհիտ.

Ով որ չողորմի դմա,

նա նման է սատանայի.

Ով շատ ժողովել ջանայ,

յամէնէն չուտով կու թափի:

40. Եւ ասէ Ամիր Մուսին. Բարձէք ի
725 զանձէտ որչափ կարէք: Եւ բարձին շատ
պատվական ակունք եւ ոսկի:

Եւ էլան ի քաղաքէն եւ փակեցին զգլուխն
եւ զնային ծովեղորովն շատ աւերեւ եւ քառա-
սուն լմնցաւ: Եւ տեսան բլուր մի, եւ ի 730
բլուրին տակն սեւ մարդիք զմեծայմեծք,
ոնցոր զհեծելին տեսան՝ փախան. եւ կայր
քարայր մի եւ ի ներս սեւ մարդիք. եւ ի յան
տեղն իջաւ:

Ամիր Մուսին ասէ ցհալեւորն. Այս են 735
ան սեւ մարդիքն, որ քաջն ասաց: Եւ զային
ան սեւ մարդիքն մտիկ զնէին հեծելին:

Ասէ Ամիր Մուսին ցԱլեւորն. Կարեո՞
զրուցել առ սեւ մարդկացս հետ:

Եւ Հալեւորն ձայնեց եւ հասկըցուց: Եւ 740
կոչեաց զԱլեւորն թագաւորն եւ նստուց
եւ կերան եւ խմեցին:

739 հեց:

